ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«09» «09» 2019թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Յուրա Մուշեղյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Արմեն Զոհրաբյան /ԳԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
ՎալերՀոդաբաշլան/ԲԱ/, Գուրգեն Մելքոնյան/ԲԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

«ՀՀ ԳՄ ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի օրակարգ

1. Միաժամանակյա բանակցությունների վարում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնների մասով << Ալ-Անուշ >> ՍՊԸ-ի հետ:
2. Ներկայացրած գնային առաջարկների և բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում:
3. Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:
4. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներից պահանջել ներկայացնել հրավերով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:
5. Տեղեկատվություն հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի օրվա , ժամի և վայրի մասին որոշման ընդունում:

1. 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնների մասով << Ալ-Անուշ >> ՍՊԸ-ի հետ միաժամանակյա բանակցությունների վարում

Քանի որ <<Ալ-Անուշ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչները չեն ներկայացել գնումների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, ուստի ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնների մասով գնումը համարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Ներկայացրած գնային առաջարկների և բանակցությունների արդյունքում գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչելու մասին որոշման ընդունում

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՄԵՆԱՐ>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Գնահատող հանձնաժողովի որոշեց՝

''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով՝ <<ՄԵՆԱՐ>> ՍՊԸ-ից պահանջել ներկայացնել հրավերով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը՝ Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 209 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Յու. Մուշեղյան

Անդամներ՝ _____ Ա. Զոհրաբյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան